

# ՀԱՄԱԿ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼ ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՑ

22.01.2014 10:29



ՀՀ Փաստաբանների պալատ դիմում է ստացվել ՀՀ Արդարադատության նախարարության «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գտնվող դատապարտյալ Արմեն Վալերիկի Ղազարյանից:

Դատապարտյալը հայտնում է, որ դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2րդ և 3-րդ մասերով և 34-177 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հատկանիշներով: Արմեն Ղազարյանի խոսքով 'Կենտրոն-Նորք Մարաշ' ընդհանուր իրավասության դատարանը 26.04.2012թ. դատավճռով նրան դատապարտել է տասը տարի ազատազրկման: «Պատժի սկիզբը 06.10.2012 թվականն է, բայց նշված է 07.10.2012 թվականը», - նշված է նամակում:

**«Ես ունեմ մայր, որը տարեց է և ի վիճակի չէ, որպեսզի այցելի Փաստաբանների պալատ և խնդրի իրեն տրամադրել վճարովի փաստաբան, այս իսկ պատճառով Ձեզ եմ խնդրում բացառության կարգով ինձ տրամադրել վճարովի փաստաբան և այցելի վերը նշված ՔԿՀ 15-20 րոպե զրուցելու համար»,- գրում է դատապարտյալ Ղազարյանը:**

Արմեն Ղազարյանը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կներկայացնի իր գործի մանրամասները և փաստաբանի հետ կքննարկի հետագա անելիքները:

**Նախորդ նորոգությունը:** ԱՐԱ ԶՈՂՐԱԲՅԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

**Հաջորդ նորոգությունը:** «ԱՐՄՆՅՈՒԳ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })